ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԱՐՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՇՈՒՐՋ (VIII-XII ԴԱՐԵՐ)

Հայաստանի արաբական նվաճումը ուղեկցվեց երկրի ներսում արաբամահմեդական տարրի հետզհետե հաստատմամբ: Սա հատկապես ակնհայտ դարձավ 774-775 թթ. հայերի ապստամբությունից հետո, երբ արաբների ստվար զանգվածներ, որոնք մինչ այդ գաղթել էին հայկական նահանգներին սահմանամերձ Վերին Միջագետք, սկսեցին ներթափանցել Հայաստանի խորքային մասերը:

Հայաստանի կարևորագույն նշանակությունը Արաբական խալիֆայության համար հայտնի է. նախ Հայքի մի շարք տարածքներ կազմում էին արաբաբյուզանդական սահմանամերձ գոտու՝ Ալ-Սուղուրի բաղկացուցիչ մասը և ուստի հանդիսանում հենարան Բյուզանդիայի դեմ ռազմական գործողությունների համար, ապա խալիֆայության Արմինիա կոչված նահանգը, որի բաղկացուցիչ մասն էր կազմում Հայաստանը, կարևոր հենակետ էր նաև խազարների դեմ Արաբական խալիֆայության մղած պայքարում:

Բացի այդ, արաբների մեծաքանակ ռազմական ներկայությունը բուն Հայաստանի խորքում, նրանց հնարավորություն էր տալիս մշտական հսկողություն սահմանել Արմինիայի ողջ տարածքում և արդյունավետ ձևով այստեղ ճնշել արաբական տիրապետության դեմ ուղղված ցանկացած ոտնձգություն[1]:

Հայաստանում արաբների հաստատման մասին տեղեկություններ հաղորդում են մի շարք հայ և արաբալեզու հեղինակներ (Ղևոնդ, Թովմա Արծրունի, Հովհաննես Դրասխանակերտցի, Մովսես Կաղանկատուացի, Յակուբի, Մուկադդասի, Բալազուրի, Իբն Խալլիկան, Թաբարի և այլոք): Այսուհանդերձ այսօրինակ տեղեկությունները սակավ և կցկտուր են, ուստի դժվարությամբ են թույլ տալիս լիարժեք պատկերացում կազմել Հայաստանում արաբների բնակեցրած վայրերի, արաբամահմեդական տարրի սոցիալական կյանքի և մանավանդ քաղաքներում հայ ազգաբնակչության հետ նրա փոխհարաբերությունների բնույթի մասին:

Հայաստանում արաբական տիրապետությանը և արաբների հաստատման վերաբերող հարցերը քննվել են արդեն իսկ հայ պատմաբաններ Մ. Չամչյանի և Ղ. Ինճիճյանի աշխատություններում[2]:

XX-րդ դարի առաջին լուրջ ուսումնասիրությունը պատկանում է Մ. Ղազարյանի գրչին[3]: Եվրոպացի և ռուս արևելագետների շարքում Հայաստանի արաբական տիրապետության ժամանակաշրջանին այս կամ այն չափով վերաբերող նշանակալից ուսումնասիրություններ ունեն Յ. Սարկվարտը, Ժ. Լոռանը, Ի. Ժուզեն, Վ.Սինորսկին, Մ. Կանարը, Ա. Վասիլևը, Է. Հոնիգմանը և այլք[4]:

Հայ գիտնականներից արաբական տիրապետությունը Հայաստանում քննության են առել Հ. Սանանդյանը, Հ. Զորյանը, Բ. Առաքելյանը, Ա.Շահնազարյանը և այլոք[5]:

Դվինի բազմամյա պեղումների արդյունքները ամփոփում են Կ. Ղաֆաղարյանի և Ա. Քալանթարյանի աշխատությունները[6]: Արաբական տիրապետության ամբողջ ժամանակաշրջանին, Հայաստանում արաբական ամիրայություններին և ընդհանրապես Հայաստանի ե Արաբական խալիֆայության փոխհարաբերություններին վերաբերող համապարփակ բացառիկ նշանակություն ունեցող ուսումնասիրություններ են Ա. Տեր-Ղևոնդյանի աշխատությունները[7]:

Հայաստանում արաբական արձանագրությունների և դրանց պատմական նշանակության վերաբերյալ աշխատություններ ունի Ա. Խաչատրյանը[8]: Հատկապես արժեքավոր է հեղինակի երկար տարիների աշխատանքի արդյունքը հանդիսացող արաբական վիմագրության դիվանը[9]:

Մեր նպատակն է այստեղ դիտարկել Հայաստանի այն բնակավայրերը, որտեղ հաստատվեցին արաբական ցեղերը՝ արաբական տիրապետության սկզբնական շրջանից մինչև ամիրայությունների գոյության վերջը:

Ի մի բերելով աղբյուրների տվյալները և արևելագետների ուսումնասիրություններում եղած դիտարկումները, կարելի է մատնանշել այն բնակավայրերը, ուր հաստատվել է արաբամահմեդական տարրը: Հարավ-արևմտյան Հայաստանում դրանք են այսպես կոչված Չորրորդ Հայքը, Մելիտենե կենտրոնով, որ ընդգրկված էր արաբա-բյուզանդական սահմանային գոտու՝ ալ-Սուղուրի մեջ, այնուհետև Աղձնիքը, Բերկրին (Աղիովիտ), Գողթնը (Վասպուրական):

Աղձնիքը առաջին նահանգներից էր, ուր բնակություն հաստատեցին հյուսիսարաբական Շայբան ցեղի ներկայացուցիչ արաբները: Նրանք հաստատվեցին Աղձնիքի Նփրկերտ, Ամիդ, Արզն և Բաղեշ քաղաքներում: Քաջ հայտնի է, օրինակ, որ Ամիդ քաղաքը հետագայում կոչվեց Դիար Բաքր՝ Բաքր ցեղի մի հատվածը հանդիսացող Շայբանի անվամբ:

Հետագայում Արզնում ու Բաղեշում ստեղծվեց Զուրարիկների (Բաքր ցեղից) ամիրայությունը[10]:

Մեկ այլ հյուսիսարարական ցեղ, որ նշանակալից դեր ունեցավ Հայաստանում արաբական տարրի ներթափանցման գործում, Սուլայմն էր (Սուդար ճյուղից), ավելի ճիշտ՝ նրա Կայս կամ հայ հեղինակների մոտ Կայսիկ /Սուլայմ ցեղից/ հատվածը: Այն եռանդուն կերպով մասնակցություն էր հանդես բերում Բյուզանդիայի դեմ մղվող պատերազմներում, ուստի նախևառաջ հաստատվեց Բյուզանդիային սահմանամերձ տարածքներում՝ Բաղեշից սկսած մինչև Կարնո քաղաքը:

Կարնո քաղաքի վերաբերյալ կա Բալազուրիի մի վկայություն, ըստ որի Հաբիբ իբն Սասլաման 654թ. Ասորիքից և Միջագետքից երկու հազար արաբ բնակեցրեց այդ քաղաքում և նրանց հողեր բաժանեց[11]: Կաբինում, ինչպես հայտնի է, ստեղծվեց Կաբինի Կայսիկների արաբական ամիրայությունը: Այս տարածքը որպես հենարան օգտագործելով, ցեղը կարողացավ զենքի ուժով տարածվել դեպի արևմուտք և, մասնավորապես, հաստատվեց Կամախում, որը, ըստ Բալազուրիի, Սուլայմի ներկայացուցիչ Ումայր իբն ալ-Հուբաբը կարողացավ գրավել բյուզանդացիներից[12]:

Ուսումնասիրողները նշում են, որ Կարնո քաղաքը Մեծ Հայքի միակ քաղաքն էր, որ արաբական տիրապետության հենց սկզբից բնակեցվեց Կայսիկ արաբներով, քանի որ այն հանդիսանում էր Բյուզանդիայի դեմ պայքարի համար կարևորագույն ռազմակայան[13]:

X դարի վերաբերյալ Կոստանդին Ծիրանածինը նշելով Կարնո քաղաքի բնակիչների մասին ավելի շուտ նկատի ունի մահմեդականներին: Սակայն, ինչպես իրավացիորեն նշում է Արամ Տեր-Ղևոնդյանը, սա չի նշանակում, որ այդ քաղաքը զուտ արաբական կամ մահմեդական է եղել: Բնական է, որ քաղաքում պետք է լիներ զգալի թվով հայ բնակչություն[14]:

Վանա լճի շրջակայքի նշանավոր քաղաքներից, որում հաստատվել են արաբները, եղել է Խլաթը: Խլաթը Կաբինի նման արաբների համար կարևոր ռազմակայան էր: Այստեղ կարելի է բերել պարսիկ Նասիր Խուսրավի այն հայտնի հաղորդումը, ըստ որի XI դարում այստեղ երեք լեզվով էին խոսում՝ արաբերեն, պարսկերեն և հայերեն[15]:

Ա. Տեր-Ղևոնդյանը նշում է, որ այն փաստը, որ հայոց եկեղեցիները դուրս էին թողնվել քաղաքի պարիսպներից, ցույց է տալիս մահմեդական տարրի տիրապետության աստիճանը[16]:

Բեթկրիում և Վասպուրականի Գողթն գավառի տարածքում ստեղծվել են Ուքմանիկների (Սուլայմի մեկ այլ հատված) ամիրայությունը և Սաջյաններին ենթակա մի ամիրայություն: Գողթնը, և հատկապես Նախճավան /արաբերեն՝ Նաշավա/ քաղաքը արաբների համար

կարևոր վարչական կենտրոն էր, ուստի տրամաբանական է ենթադրել, որ արաբների թիվը այստեղ պետք է համեմատաբար մեծ լիներ: Այստեղ կարելի է բերել Իբն Հաուկալի հաղորդումը, ըստ որի X դարում այստեղ խոսակցական լեզուն հայերենն էր[17]: Չնայած Նախճավանը վերածվեց արաբական հենակետի՝ արաբական նվաճմանը զուգընթաց, այսուհանդերձ, այստեղի բազմաթիվ արաբական վիմագրական նյութը վերաբերում է ավելի ուշ շրջանի՝ XIV դ.: Ավելի վաղ շրջանի համար կա ընդամենը XII դ. մի քանի տապանաքար[18]:

IX դարի կեսերից Կայսիկները /Սուլայմ ցեղից/ կարողացան տիրել Մանազկերտին և հիմնել Մանազկերտի Կայսիկների ամիրայությունը, ուստի արաբների թիվը այստեղ մեծ է եղել: Ասողիկի հաղորդմամբ, X դարի վերջին արաբների այստեղից տեղահանվեցին Տայքի Դավիթ Կուրոպաղատի կողմից և փոխարենը հայեր տեղավորվեցին[19]:

Բացի հարավ-արևմտյան Հայաստանից, արաբները զանգվածաբար հաստատվել էին Այրարատ նահանգում և առաջին հերթին Դվին քաղաքում, որը մոտ իննսուն տարի Արմինիայի վարչական կենտրոնն էր և արաբ ոստիկանի նստավայրը:

Եթե իրավ է, որ Դվինը ունեցել է մոտավորապես հարյուր հազար բնակչություն, ապա այն, որ մահմեդականների թիվը Դվինում եղել է առնվազն մի երկու-երեք տասնյակ հազար, կասկած չպետք է հարուցի: Այստեղ կարելի է բերել Մունաջիմ Բաշիի հաղորդած մեկ տեղեկություն, որ 953թվին Աշոտ Գ-ի երեսուն հազարանոց բանակի Դվինի վրա կատարած հարձակման ժամանակ Մուհամմադ իբն Շադդադը մահմեդականներին դուրս է բերում քաղաքի մոտակայքը, որպեսզի հակառակորդը հարկ եղած պահին տեսնի նրանց մեծաքանակությունը և լսի նրանց ռազմատենչ կրոնական բացականչությունները: Ըստ հեղինակի՝ հակառակորդը տեսավ «սարի չափ մեծ զանգվածին, որոնք նրանց աչքին սվազից շատ երևացին»[20]: Այս տեղեկության հիման վրա իհարկե անհնար է արաբ կամ մահմեդական բնակչության թիվը որոշել, սակայն առնվազն մի երկու-երեք տասնյակ հազարի առկայությունը կասկած չպետք է հարուցի:

Մուկադդասիի այն հաղորդումից, թե Դվինում մահմեդականները պատկանել են հանիֆի մազհաբին և կրոնական «հավաքույթներ» են ունեցել /ավելին Մուկադդասին նշում է որ ինքը անձամբ մասնակցել է այդպիսի մի «հավաքույթի»/[21] կարելի է եզրակացնել, որ Դվինի մահմեդականները կայացած կրոնական և սոցիալական կյանքով են ապրել, ինչպես այլ ցանկացած խալիֆայության քաղաքում: Արդեն IX դարում քաղաքը ունեցել է մահմեդականների գերեզմանոց: Հայտնի է, որ օրինակ ոստիկան Խալիդ իբն Եզիդ ալ-Շայբանին թաղվել է այս գերեզմանոցում[22]:

Սակայն հայտնի է, որ չնայած նրան, որ քաղաքում /1236թ. քաղաքը վերջնականորեն ավերել են մոնղոլները/ տիրապետող տարրը գրեթե միշտ մահմեդականներն են եղել, Դվինում հայերը միշտ էլ մեծամասնություն են կազմել/Մուկադասին ունի այսպիսի վկայություն/[23]:

Թեև արաբ կառավարիչները միշտ զգացել են, որ մահմեդականների նկատմամբ հայ ազգաբնակչության մեծամասնություն լինելը Դվինում անշուշտ սպառնալիք էր նրանց իշխանության համար /օրինակ 813թ., երբ Շապուհ Բագրատունին հնազանդեցրեց Աբդ ալ-Մալիք Ջահաֆյանին, Դվինի բնակիչները սպանեցին վերջինիս/ այսուհանդերձ մեր կարծիքով, նրանք պարզ գիտակցում էին, որ քաղաքի տնտեսության, արհեստների /մասնավորապես այսպես կոչված հայկական ապրանքների արտադրությունը, որոնք համբավ էին վայելում խալիֆայության տարբեր քաղաքներում/[24] և առևտրի կազմակերպումը, որը նրանց հսկա եկամուտներ էր բերում, անհնարին կլիներ առանց ստվար հայ զանգվածի:

Հայերի վիճակը մահմեդականների տիրապետության ներքո, թեկուզ և Հայաստանի ներսում, ապահով չէր կարող լինել: Միջնադարյան հայ հեղինակները վառ ձևով նկարագրում են արաբների կրոնական անհանդուրժողականությունը հայերի նկատմամբ, կրոնափոխության փորձերը և որպես արդյունք հայերի բազմաթիվ նահատակությունները:

Դվինից, որը պետք է որ բավականին հարուստ արաբական, այդ թվում նաև վաղարաբական շրջանի վիմագրական նյութ ունենար /ինչպես արդեն նշվեց վերևում Դվինը ունեցել է արաբական գերեզմանոց/, հայտնի է ընդամենը երկու արաբական վիմագիր արձանագրություն, այն էլ ետմոնղոլական շրջանին պատկանող[25]: Փոխարինը Դվինում պեղվել են արաբական արձանագրություններով բազմաթիվ խեցի և ապակյա իրեր՝ թե՛ տեղում արտադրված, և թե՛ ներմուծված[26]: Բազմաքանակ է նաև Դվինում պեղված արաբական, այդ թվում և վաղ արաբական /Օմայան, Աբբասյան/ և ավելի ուշ շրջանի թուրքմենական հարստություններին պատկանող կառավարիչների հատած դրամները /Սելջուկյան, Ելտկուզյան և այլն/[27]:

Պետք է ենթադրել, որ մահմեդականների թիվը մեծ է եղել Անիում Շադդադյանների տիրապետության ժամանակաշրջանում (1072-1199թթ.): Սրա վկայություններն են Անիում բազմաթիվ արաբերեն և պարսկերեն արձանագրությունների առկայությունը[28]: Պետք է ենթադրել, որ անիաբնակ մահմեդականների սոցիալական կյանքը պետք է շատ գծերով նման լիներ Դվինի մահեդականների ապրելակերպին:

Հետաքրքրական է, որ Դամասկոսում ուսումնական պրակտիկայի տարիներին, այս հոդվածի հեղինակը հյուրընկալվեց մի արաբի տանը, որի ազգանունը ալ-'Անի էր: Վերջինս պնդում էր, որ ըստ իրենց տոհմի

ավանդության, իր նախնիները մի քանի հարյուր տարի առաջ Սիրիա են գաղթել Անիից, որի մասին էլ վկայում է իր ազգանունը:

Բնական կլինի ենթադրել, որ Արևելյան Հայաստանի որոշ այլ բնակավայրերում նույնպես բնակվել են մահմեդականներ: Այս հարցի պարզաբանմանը կարող է նպաստել վիմագրական նյութը՝ արաբերեն վիմագրական նյութի ուսումնասիրությունը: Թալինի շրջանում, օրինակ, հնարավոր է ենթադրել արաբամահմեդական տարրի առկայություն: Սրա վկայությունն է Դաշտադեմ գյուղի միջնաբերդի շինարարական նշանակության արաբական արձանագրությունը[29]: Արձանագրությունը հաղորդում է 1174 թվականին Շադդադյան Ադուդ ադ-Դին Սուլթանի կողմից ամրոցի կիսակլոր աշտարակի կառուցման մասին: Ըստ երևույթին ամրոցը կարևոր պաշտպանական կառույց էր Շադդադյանների նստավայրի - Անիի ճանապարհին: Մեր կարծիքով, կարելի է ենթադրել, որ ամրոցը պետք է ունեցած լինի մահմեդականներից բաղկացած մի մշտական ռազմական միավոր:

VIII-XII դդ. արաբական տարրի փոքրաթիվ և ժամանակավոր առկայությունը կարելի է ենթադրել նաև Արևելյան Հայաստանի, ներառյալ այժմյան Հայաստանի Հանրապետության այլ բնակավայրերում:

Այսպիսով, կարելի է ասել, որ արաբները Հայաստանում նախապես բնակվել են արաբա-բյուզանդական սահմանամերձ գոտու մասերում՝ այսպես կոչված Չորրորդ Հայքում, Աղձնիքում, Դվինում, հետագայում տարածվելով նաև Հայաստանի տարածքում առաջացած զանազան արաբական ամիրայություններում: Արաբները այստեղ էլ բնակվում էին հայերի հետ միասին, բնականաբար իշխող նվաճողական տարր հանդիսանալով: Կարելի է ենթադրել, որ այն դեպքերում, երբ ամիրայությունների հողերը միացվում էին հայոց կառավարիչներին պատկանող տարածքներին, արաբները կամ վտարվում էին՝ փախչելով մոտակա ամիրայությունների տարածքը, կամ էլ սրանց որոշ մասը, կարելի է ենթադրել, ձուլվում էին հայ բնակչությանը: Ինչպես իրավացիորեն նշում է Ա. Տեր-Ղևոնդյանը, արաբ բնակչության առկայությունը Հայաստանում հող նախապատրաստեց և հենարան եղավ մահմեդական հաջորդ նվաճող տարրերի՝ քրդերի և սելջուկա-թուրքմենական հրոսակների երկիր ներթափանցելու համար[30]:

MIKAYELYAN TIGRAN

AROUND ESTABLISHMENT OF ARABS IN TOWNS OF ARMENIA (VIII-XII A.D.)

(Summary)

As a result of Arabic conquests, Arabs established themselves in towns of province of Aldznik (Nprkert (Ar. Mayafarqin), Amid (Diarbakr), Arzn, Balesh (Ar. Badlis), Karin and Kamakh.

In the region around the Lake Van, Arabs established in mass in Khlat (Ar. Akhlat), Berkri.

Also town of Nakhchavan of Goltn province was an important station for Arabs.

As known Dvin of (Ayrarat province) was for a long capital of Arminia and naturally number of Arabs might have been large here. If it is true that number of Dvin's population is 100 000, it is logical to suppose number of Arabs around 20-30 thousand at least. However very few gravestones of later period (XIII-XV AD) have been found from Dvin. Instead a rich collection of pottery, glassware with Arabic inscriptions has been excavated. Also a large collection of early Arabic (Ummayad and Abbasid) and (Seljuqid and Ildegizid) coins have been revealed.

By searching of Arabic inscriptions also enables to fix some temporary present of small amounts of Arab communities elsewhere in Eastern Armenia. The inscription by Shaddadid Adud al-Din dated 1174 AD informs of construction of the fortress citadel in Talin region of Aragatsotn province. Therefore we can suppose present of small military unit consisting of Arabs here. Similarly it would be logical to suppose that small settlements of Arabs existed in other strategic locations of Eastern Armenia, which are difficult to fix due to absence or disappearance of early Arabic gravestones and building type of inscriptions.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները..., էջ 59:
2. Մ. Չամչեան, Պատմություն Հայոց, Բ, Վենետիկ, 1785; Ղ. Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վենետիկ, 1835:
3. M. Ghazarian, Armenien unter der arabischen Herrschaft, Marburg, 1903; Ա Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները..., էջ 33:
4. J. Markwart, Osteuropaische und Ostasiatische Streifzüge, Leipzig, 1903; J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, Paris, 1919; J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930; И. Жузе, Мутагаллибы в Закавказье в IX-X веках, Материалы по истории Грузии и Кавказа, вып. III, Тифлис, 1937; V. Minorsky, Studies in Caucasian History, London, 1953; M. Canard, Histoire de la dynastie des Hamdanides de Jazirah et de Syrie, Alger, 1951; Նույնի, Les Hamdanides et l'Armenie, Annales de l'Institute d'Etudes Orientales, Alger, 1948, VII; A.A. Vasiliev, Byzance et les Arabes, t. I, t. II, III parties, Bruxelles, 1950; E. Honigmann, Die Ostgrenze des Byzantinisches Reiches, Bruxelles, 1935:

5. Հ. Սանանդյան, Արաբական արշավանքները Հայաստան, մանր հետազոտություններ, Երևան, 1932; Հ. Սանանդյան, Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ, Երևան, 1939;Նույնի, Հայաստանի քաղաքները 10-11-րդ դդ., Երևան, 1940; Նույնի, О торговле в городах Армении, Ереван, 1954; Հ. Զորյան, Արաբների հարկային քաղաքականությունը ֆեոդալական Հայաստանում, Երևանի համալսարանի տեղեկագիր, 1927, N 2, 3; Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, Երևան, 1958; А. Шахназарян, Двин, Ереван, 1940:
6. Տե՛ս օրինակ Կ. Դաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952; Նույնի, Դվին քաղաքը և նրա պեղումները, II, 1982; Ա. Քալանթարյան, Դվինի նյութական մշակույթը IV-VIII, «Հայաստանի հնագիտական հուշարձանները» մատենաշարի 5-րդ գիրք, Երևան, 1970; Դվին II, Կ.Գ. Դաֆադարյան, Ա.Ա. Քալանթարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները (1973-1980 թթ.), Երևան, 2002:
7. Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965; Նույնի Армения и Арабский Халифат, Ереван, 1977:
8. Տե՛ս օրինակ А. Хачатрян, Нижнеталинская арабская надпись 570/1174г., ՊԲՀ, 1979, N 4; А. Хачатрян, Трехъязычная надпись из Елегиса, "Кавказ и Византия", вып. 3, Ереван, 1982:
9. А. Хачатрян, Корпус арабских надписей Армении, VIII-XVI вв., выпуск I, Ереван, 1987:
10. Հայաստանի ամիրայությունների պատմության վերաբերյալ մանրամասն տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյանի մոտ:
11. Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները..., էջ 227:
12. Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները..., էջ 60:
13. Նույն տեղում:
14. Կոստանդին Ծիրանածին, Բյուզանդական աղբյուրներ. Բ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հր. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 14-15;Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները..., էջ 228:
15. Насир-и Хусрау, Сафар-намэ Книга Путешествия, перевод и вступительная статья Е.Э. Бертельса, Москва-Ленинград, 1933, էջ 38:
16. Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները..., էջ 230:
17. Bibliotheca Geographicorum Arabicorum, edidit M.J. de Goeje, Viae et regna, auctore Ibn Hauqal, Lugduni Batavorum, 1873; Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները..., էջ 227:
18. Տե՛ս А. Хачатрян, Корпус арабских надписей Армении, VIII-XVI вв., выпуск I, Ереван, 1987, էջ 119-123:
19. Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները..., էջ 230:
20. V. Minorsky, Studies in Caucasian History, Cambridge Oriental Series, London, 1953, էջ 10-11:
21. Bibliotheca Geographicorum Arabicorum, edidit M.J. de Goeje, Descriptio Imperii Moslemici auctore al-Mokaddasi, Lugduni Batavorum, 1876; էջ 249; Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները..., էջ 225:

22. Նույն տեղում:
23. Bibliotheca Geographicorum Arabicorum, edidit M.J. de Goeje, Descriptio Imperii Moslemici auctore al-Mokaddasi, Lugduni Batavorum, 1876, էջ 377; Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները..., էջ 224:
24. А. Мец, Мусульманский ренессанс, Москва, 1966, էջ 361:
25. А. Хачатрян, Корпус..., էջ 51:
26. Դվին II, Կ.Գ. Ղաֆադարյան, Ա.Ա. Քալանթարյան, passim:
27. Դվին II, Կ.Գ. Ղաֆադարյան, Ա.Ա. Քալանթարյան, էջ 123-140:
28. А. Хачатрян, Корпус..., էջ 53-58; В.В. Бартольд, Персидкая надпись на стене анийской мечети Мануче, Сочинения, т. IV, Работы по археологии, нумизматике, эпиграфике и этнографии, Москва, 1966, էջ 313-339:
29. 1. А. Хачатрян, Нижнеталинская арабская надпись 570/1174г., ՊԲՀ, 1979, N 4:
30. 1. Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները..., էջ 259: